“ՍԱ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ... ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹՅՈՒՆՆ Է: ՆԵՐԵՑԵՔ, ՀԱՅԵՐ...”

Posted on March 15, 2016 by Keghart



Category: Opinions

Վիկտոր Ալեքսանդրով, Սանկտ Պետերբուրգ, 16 Մարտ 2016
Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարարության սպա

> ***Թուրքիայի հետ կնքված բարեկամության ու եղբայրության մասին Մոսկովյան պայմանագիրը ամենաամոթալի փաստաթղթերից մեկն է ռուսական դիվանագիտության պատմության մեջ:***

1921 թ. մարտի 16-ին Թուրքիայի հետ ստորագրվել է բարեկամության ու եղբայրության մասին Մոսկովյան պայմանագիրը: Սա մեր դիվանագիտության պատմության մեջ առավել խայտառակ փաստաթղթերից մեկն է. այդ օրը պետք է դիտարկել որպես սեւ տարեթիվ, քանի որ դա, ըստ էության, ազգային ամոթի, նենգ, ուխտադրուժ դավաճանության օր է:

Վիկտոր Ալեքսանդրով, Սանկտ Պետերբուրգ, 16 Մարտ 2016
Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարարության սպա

> ***Թուրքիայի հետ կնքված բարեկամության ու եղբայրության մասին Մոսկովյան պայմանագիրը ամենաամոթալի փաստաթղթերից մեկն է ռուսական դիվանագիտության պատմության մեջ:***

1921 թ. մարտի 16-ին Թուրքիայի հետ ստորագրվել է բարեկամության ու եղբայրության մասին Մոսկովյան պայմանագիրը: Սա մեր դիվանագիտության պատմության մեջ առավել խայտառակ փաստաթղթերից մեկն է. այդ օրը պետք է դիտարկել որպես սեւ տարեթիվ, քանի որ դա, ըստ էության, ազգային ամոթի, նենգ, ուխտադրուժ դավաճանության օր է:

Ես չեմ հիշում պատմական որևէ նախադեպ, երբ պատերազմում փաստացի հաղթանակած երկիրը պարտված կողմին է վերադարձնում ոչ միայն օկուպացիայից ազատագրված տարածքները, այլ նաեւ ավելացնում է դրանց սեփական տարածքը կամ, ավելի ճիշտ, հայկական հողերը: Կատարվածի հիմնական նողկանքն այն է, որ թուրքերի եւ կոմունիստների միջեւ կայացած հանցավոր գործարքի արդյունքում տուժել են առաջին հերթին մեր դաշնակից հայերը: Հայ ժողովուրդը փաստորեն հայտնվել է կոմունիստական մուրճի եւ թուրքական սալի միջեւ: Արեւմտյան Հայաստանի հսկայական տարածքները, հայկական ճարտարապետության, քրիստոնեական քաղաքակրթության տասնյակ հազարավոր հուշարձանները, երբեմնի ծաղկուն Կարսը, բիբլիական Արարատը հենց այնպես, առանց մի կրակոցի հանձնվել են թուրքական կողմին:

1925 թ. Թուրքիայում Խորհրդային Ռուսաստանի դեսպան Վինոգրադովը պաշտոնական նոտա է հղել Ստամբուլին, պահանջելով չեղյալ հայտարարել 1921 թ. ռուս-թուրքական պայմանագիրը և սպառնալով, թե Ռուսաստանը պատրաստ է իրականացնել դա միակողմանիորեն: Միեւնույն ժամանակ, ըստ թուրքական աղբյուրի, դեսպան Վինոգրադովը արտաքին գործերի նախարարությունում ասաց հետևյալը. «Մենք չենք կարող սպասել 25 տարի եւ ստորագրել ենք

պայմանագիրը, որովհետեւ այն ժամանակ տկար էինք»: Իսկ հիմա «մենք ուժեղ ենք եւ պահանջում ենք վերականգնել Հայաստանի սահմանները»:

Փարիսեցիություն, կեղծիք, տխմար, սակավամիտ պահվածք, զոռբայություն… Այլ բառեր չես էլ գտնում զգացմունքներդ արտահայտելու համար: Նա պահանջել է «վերականգնել Հայաստանի սահմանները»: Ներեցեք, սիրելի ընթերցողներ, կտրուկ տոնի համար, բայց մեկը լիներ հարցներ նրանց. իսկ ո՞ր սատանան ձեզ դրդեց թուրքերին զիջել ձեզ չպատկանող տարածքները: Որոշ ժամանակ էլ անց «դիվանագետ» կոչվող այս վիժվածքները շարունակեցին առեւտուրը Հայաստանի հաշվին և թուրքին հանձնեցին նաև Արցախն ու Նախիջեւանը:

1921 թվականի Մոսկովյան պայմանագիրը դավաճանություն է, դիվանագիտական խաղերով քողարկված իսկական ուխտադրժություն ոչ միայն Հայաստանի, այլեւ ռուսական շահերի տեսանկյունից: Դավաճանված է մեր զինվորների թափված արյունը, բոլոր նրանց, ովքեր թաղված են Գյումրիի Պատվո Բլրում: Դավաճանված է ռուս գեներալ Յուդենիչի ռազմիկների հիշատակը, ովքեր վերականգնել են պատմական արդարությունը՝ ազատագրելով հայկական հողերն ու հասնելով Բոսֆոր և Կոնստանդնուպոլիս: Պղծված է և Էրզրումի ու Սարիղամիշի համար մարտնչած հայ և ռուս զոհված հերոսների սուրբ հիշատակը:

Դավաճանված են նաև իմ նախնիները. նախևառաջ նախապապերիցս մեկը՝ կազակ Ֆիլիպ Ստեպանովիչ Կոստիրոն, ով ազատել է Կարսը, կռվել է Սարիղամիշում, իսկ հետո Մերձավոր Վոլգայի մոտ, Պենզա քաղաքում, իր ձեռքերով կառուցել է երկհարկանի առանձնատուն (ներկայիս Կալինինի փողոցում), որտեղ ապրել է և իր հայազգի մարտական ընկերոջ՝ Հովհաննեսի ընտանիքը: Այդ ստոր արարածները հետագայում բռնադատել են եւ Հովհաննեսին, եւ իմ նախապապին: Երկրորդ նախապապս՝ բանակային քահանա Ալեքսանդր Կոնդրատյեվիչ Կվասովը, եղել է ռազմական տարբեր թատերաբեմերում, այդ թվում՝ Կովկասյան ճակատում, խոստովանեցնում էր զինվորներին, ոգևորում նրանց, մխիթարում վիրավորներին: Նա հրաժարվել է հանել խաչը եւ կախաղան է բարձրացվել հենց եկեղեցու զանգակատան մեջ՝ Չյոռնի Զատոն գյուղում: Այդ ամենի համար ես երբեք չեմ ների կոմունիստներին:

Նրանք, ովքեր ստորագրել են այդ պայմանագիրը, պարզապես թքած ունեին թե Ռուսաստանի, թե Հայաստանի վրա: Իմ երկրում իշխանության էին եկել չարչիական հոգեկերտվածք ունեցող թափթփուկները, սադիստական հակումներով աչքի ընկած թմրամոլներն ու պասիվ պեդերաստները, որոնց համար որևէ սրբություն գոյություն չուներ: Այդ կեղտոտ խաժամուժը վերածել էր հսկայական երկիրը մթերային խանութի, որտեղ ամեն ինչ վաճառքի էր հանված:

Այժմ մեր քաղաքական գործիչները կրկին սկսեցին խոսել ռուս-թուրքական պայմանագրի չեղարկման անհրաժեշտության մասին: Չեմ հավատում, անկեղծորեն ուզում եմ, բայց կտրականապես հրաժարվում եմ հավատալ նրանց, ոչ ոք ինքնակամ չի հրաժարվի տարածքներից, միջազգային հանրությունն էլ հազիվ թե մասնակցի Թուրքիայի մասնատմանը: Հետեւաբար, դրանք սոսկ պոպուլիստական հայտարարություններ են:

Եզրափակելով խոսքս, ուզում եմ ներողություն խնդրել հայ ժողովրդից իմ երկրի տգեղ ու ամոթալի

դիվանագիտական արարքի համար: Ներեցեք մեզ, հայեր, մեզ դավաճանել են ձեզ հետ միասին: Հրեաները գրեթե երկու հազարամյակ մխիթարում էին միմյանց հետևյալ խոսքերով. «Մենք դեռ կտեսնենք մեր Պաղեստինը»: Ուրեմն և մենք բոլորս պետք է ցանկանանք ու հավատանք, որ Արարատ լեռն ու հայկական տարածքներն անպայման վերադառնալու են իրենց իսկական տիրոջը և պատմական արդարությունը վերականգնվելու է: Իսկ մենք պարզապես պետք է ամեն կերպ, հնարավոր բոլոր միջոցներով մոտեցնենք այդ օրը: